# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3, հեռ. (0284)2-25-52

*04 հուլիս 2017թ.* N 01/03/04-495

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հակոբյան

Կից ուղարկվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 28-ի հերթական նիստում ընդունված N- 27-<<Ա>> -ից մինչև N-46-<<Ա>> որոշումները:

Առդիր՝ 22 թերթ:

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

*Կատ. ՝ Լուսինե Ղուկասյան*
*Հեռ՝ 0284-25696*

№ 6684
10 07 2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 27-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել ՀՀ Սյունիքի Մարզի Գորիս համայնքի ավագանու 2017 թվականի թիվ 3 հերթական նիստի օրակարգը

1. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի <<ԳՈՐԻՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 210-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. <<ՍՅՈՒՆՅԱՆՑ ԱՇԽԱՐՀ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ 500 000 /ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ/ ՀՀ ԴՐԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՒՌՆՈՒԽ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՆԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԱԿՆԵՐ ԳՅՈՒՂԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.<<ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՁԵՌՆԱՐԿ>> ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/65/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 30.7 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ Ա/Ձ ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 72.7ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՎ ԱԲԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ <ԱՆՀԱՅՏ> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 400.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՏԱԹԵՎԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13/18 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.<<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.«ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԵՄ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ
7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «4»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

**ՈՐՈՇՈՒՄ N 28-Ա**

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի «ԳՈՐԻՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 210-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 19-ի <<Գորիսի զարգացման հիմնադրամ հիմնադրելու մասին>> թիվ 210-Ա որոշումը:
2. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու կազմից 3 (երեք) տարի ժամկետով Գորիսի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2 (երկու) անդամներ՝ նշանակել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու անդամներ՝

1. Մասիս Ղևոնդյան

2. Կարեն Լազարյան

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»

ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 29-Ա

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի <<Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին>> N 286 որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով՝ վարձակալության իրավունքով, տրամադրել օգտագործման:
2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»
ք.Գորիս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2017 թվականի հունիսի 28-ի
N 29-Ա որոշման

# ՑԱՆԿ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

| հ/հ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Չափը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը (կարգը) | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Ժամկետը (տարի) | Սահմանափակումները | Շրջակա միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումները | Հաղորդակցուղիների առկայությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [redacted] | | | | | | | | | | | |
| 1 | ք.Գորիս «Արխաշան» | 09-003-0320-0028 | 19 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Անջրդի վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 2 | ք.Գորիս «Եեգիջի ձոր» | 09-003-0330-0001 | 15 հա | Գյուղատնտեսական | V կարգ | Արոտ | | 3 (երեք) | Չկան | Չկան | Չկան |
| 3 | ք.Գորիս «Կալի տակ» | 09-003-0330- | 2 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 4 | ք.Գորիս «Կալի տակ» | 09-003-0330-0045 | 3.6 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Վարելահող ջրովի | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 5 | ք.Գորիս «Կյորվա հանդ» | 09-003-0502-0006 | 2 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Ջրովի վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 6 | ք.Գորիս «Կյորվա հանդ» | 09-003-0502-0007 | 2 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Ջրովի վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 7 | ք.Գորիս «Կյորվա դաշտ» | 09-003-0502-0008 | 2.8 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Ջրովի վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 8 | ք.Գորիս «Շայլյորդ» | 09-003-0323-0002 | 2 հա | Գյուղատնտեսական | V կարգ | Խոտհարք | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 9 | ք.Գորիս «Շայլյորդ» | 09-003-0323-0003 | 2 հա | Գյուղատնտեսական | V կարգ | Խոտհարք | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 10 | ք.Գորիս «Շորին Ջուր» | 09-003-0002-0001 | 3000 քմ | Գյուղատնտեսական | | | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 11 | ք.Գորիս «Չըլըր քարեր» | 09-003-0327-0084 | 0.5 հա | Գյուղատնտեսական | V կարգ | Խոտհարք | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 12 | ք.Գորիս «Քալվանսարի դիքեր» | 09-003-0331-0009 | 10 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Անջրդի վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |
| 13 | ք.Գորիս «Քալվանսարի դիքեր» | 09-003-0331-0008 | 15.3 հա | Գյուղատնտեսական | III կարգ | Անջրդի վարելահող | | 5 (հինգ) | Չկան | Չկան | Չկան |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 30-Ա

<<ՍՅՈՒՆՅԱՆՑ ԱՇԽԱՐՀ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱՆԿ ԱՌԻԹՈՎ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ 500 000 /ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ/ ՀՀ ԴՐԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 90-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով <<Սյունյանց աշխարհ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրենի 25.04.2017թ-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.<<Սյունյանց աշխարհ>> ՍՊԸ-ին Գուսան Աշոտի ծննդյան հոբելյանական՝ 110-ամյակի առթիվ բացառիկ համար տպագրելու կապակցությամբ համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից տպագրության ծառայության համար տրամադրել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -7 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

5. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

7. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 31-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆԶՈՐԵՍԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ, 90-րդ և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ գյուղում իրականացվող «Համայնքի արոտավայրերի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացմանե ծրագրի շրջանակներում համաներդրումը ապահովելու նպատակով, Գորիս համայնքի 2017 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 1.909.950 (մեկ միլիոն ինը հարյուր ինը հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»
ք.Գորիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 32-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՒՌՆՈՒԽ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ, 90-րդ և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ գյուղում իրականացվող «Համայնքի արոտավայրերի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացմանե ծրագրի շրջանակներում համաներդրումը ապահովելու նպատակով, Գորիս համայնքի 2017 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 1.000.450 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 33-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՆԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԱԿՆԵՐ ԳՅՈՒՂԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ, 90-րդ և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ակներ գյուղում իրականացվող <<Ակներ գյուղի խմելու ջրի բաշխիչ ցանցի կառուցում>> ծրագրի շրջանակներում համաներդրումը ապահովելու նպատակով, Գորիս համայնքի 2017 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 2.983.311 (երկու միլիոն ինը հարյուր ութսուն երեք հազար երեք հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիս «4»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 34-Ա

### <<ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՁԵՌՆԱՐԿ>> ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ, 90-րդ և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից իրականացվող «Դրամաշնորհներ՝ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման ղեկավար ձեռնարկ»-ի շրջանակներում համաներդրումն ապահովելու նպատակով Գորիս համայնքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի Վ. Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 1 985 800 /մեկ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, ՀՀ Սյունիքի մարզի «Քարահունջի նախադպրոցական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 1 832 118 /մեկ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար հարյուր տասնութ/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «4»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-իթիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 01.06.2006թ. թիվ 1053-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 2, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Օրակարգի 8-րդ հարցի մասին ավագանին որոշում չի կայացրել: Որոշվել է հարցը քննարկել քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, բնության պահպանության, կոմունալ ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողովում :

| Կողմ -2 | Դեմ -3 | Ձեռնպահ -3 |
|---|---|---|
| 1. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | 1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ | 1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ |
| 2. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ | 2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ | 2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ |
| | 3. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ | 3. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի « 4 »
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-իթիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 01.06.2006թ. թիվ 1053-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում գտնվող 6-րդ թաղամասի 10-րդ բնակելի շենքերի հարևանությամբ նախատեսել 100քմ հողատարածք՝ առանց մրցույթի, յուրաքանչյուրին մինչև 20քմ հողատարածք կառուցապատման իրավունքով տրամադրել ավտոտնակներ կառուցելու նպատակով՝ 1 քմ տարեկան վարձավճար սահմանելով 400 դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»
ք.Գորիս

# ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 36-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/65/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 30.7 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ Ա/Ձ ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ, 66-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Մաշտոցի փողոցի թիվ 1/65 հասցեում Ա/Ձ Գուրգեն Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական շինության /սպասարկման տաղավար/ ընդլայնման նպատակով, շինությանը կից համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում գտնվող Մաշտոցի փողոցի թիվ 1/65/1 հասցեի 30.7քմ հողատարածքը /ծածկագիր 09-003-0110/, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ա/Ձ Գուրգեն Ավագյանին, 1քմ հողի գինը՝ 810 դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՐՋԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՁԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

**ՈՐՈՇՈՒՄ N 37-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 72.7ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՎ ԱԲԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 63-րդ, 66-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Օրբելյանների փողոցի թիվ 1 հասցեում Վարդան Մինասյանին և Արև Աբելյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով, շինությանը կից համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի այլ հողերից Օրբելյանների փողոցի թիվ 1/1 հասցեի 72.7քմ հողատարածքը /ծածկագիր 09-003-0111-0019, վկայական N11042017-09-0025, տրված 11.04.2017թ./, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել ՎարդանՄինասյանին և Արև Աբելյանին, 1քմ հողի գինը՝ 810 դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8     Դեմ -0     Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 38-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ <ԱՆՀԱՅՏ> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանի հրահանգի 9-րդ կետի 5) ենթակետը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական տարածքում գտնվող Թումանյան փողոցի թիվ 13 հասցեի տնամերձին հարևանությամբ բնակավայրերի բնակելի կառուցապատման 470,0քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող և որպես <<անհայտ>> քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասի հետ կապված անճշտության ուղղման համար, որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել Գորիս համայնքի սեփականություն:
2.Սույն որոշման 1-ին կետով համայնքային սեփականություն ճանաչված բնակելի կառուցապատման հողատարածքը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Գորիս համայնքի Գորիս քաղաքի բնակիչներ բազմազավակ ամուսիններ Արմեն Հարությունյանին և Էլիկ Մկրտչյանին՝ բնակելի տուն կառուցելու համար:
3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՐՋԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 39-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի առաջին մասի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքի Վերիշեն գյուղի 21-րդ փողոցի 25 հասցեում գտնվող /ծածկագիր՝09-096-0115-0058, վկայական N20052016-09-0004/ բնակավայրերի բնակելի կառուցապատման 1042.0քմ հողատարածքը, բնակելի տուն կառուցելու նպատակով աճուրդային կարգով օտարել, 1քմ մեկնարկային գինը սահմանելով 1500ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 40-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 63 –րդ, 66 -րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 34.2, 35.բ) կետերով և 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրնսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի բ/ ենթակետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի թիվ 181/1 հասցեում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 11,0քմ հողատարածքը և հողատարածքում կառուցված 10,8 արտաքին մակերեսով հասարարական շինությունը /1քմ շինության գինը՝ 9900դրամ/ /ծածկագիր 09-003-0224-0008 վկայական N12042017-09-0022/ օտարել Սերգեյ Ալեքսանյանին, շինության տակ գտնվող 1քմ հողի գինը՝ 810 դրամ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՐՁԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԼԱՁԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «4»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 41-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 400.0 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 13.06.2003թ. թիվ 882-Ն որոշումը, հիմք ընդունելով 16.06.2016թ. աճուրդը չկայացած համարելու մասին թիվ 2 և 05.06.2017թ. կրկնաճուրդը չկայացած համարելու մասին թիվ 2 արձանագրությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետեության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում գտնվող <<Գորիս քաղաքի Այգեստան փողոցի թիվ 8/1>> հասցեի /վկայական՝ N10022016-09-0030, ծածկագիր՝ 09-003-0093-0110/ 400.0 քմ հողամասը, որը աճուրդում և կրկնարճուդում չի վաճառվել, յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ մեկնարկային գինը իջեցնել վերջին աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով /վերջին աճուրդի մեկնարկային գին է՝ 1քմ 5000ՀՀ դրամ/:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱՐԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 42-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՏԱԹԵՎԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13/18 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 13.06.2003թ. թիվ 882-Ն որոշումը, հիմք ընդունելով 16.06.2016թ. աճուրդը չկայացած համարելու մասին թիվ 1 և 05.06.2017թ. կրկնաճուրդը չկայացած համարելու մասին թիվ 1 արձանագրությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետեռության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում գտնվող Գ.Տաթևացու փողոցի թիվ 13/18 հասցեի 17.4քմ մակերեսով հասարակական շինությունը /վկայական N08022016-09-0017, ծածկագիր 09-003-0108-0006-001-018/ , որը աճուրդում և կրկնարճուդում չի վաճառվել, յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ մեկնարկային գինը իջեցնել վերջին աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով /վերջին աճուրդի մեկնարկային գին է՝ 279.000 դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման N147Գ հաշվետվության (Որակավորման վկայական N ԱԳԳ 044)/:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՐՁԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «4»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

**ՈՐՈՇՈՒՄ N 43-Ա**

**«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածի առաջին մասով և 596 հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող <<Շինուհայրի խաչմերուկ>> 11 հասցեի քլորակայանի շենքի տակ գտնվող 0.07556հա հողատարածքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել <<Հայջրկմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -2

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

1. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ
2. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»

ք. Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

2806/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 44-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, "Քաղաքաշինության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 143 հոդվածի 8-9 կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի "ՀՀ համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 2-ի N609-Ն ու 2010թ. մարտի 4-ի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին" N1920-Ն որոշման, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 15.05.2017թ. N54 դրական եզրակացության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ գլխավոր տնօրենի 14.04.2017թ. թիվ 704 դիմումը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծում կատարվող փոփոխությունները և համայնքի վարչական տարածքում գտնվող, <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.10427 հեկտար, այդ թվում 0.02892 հեկտար խոտհարք /09-003-0318-0010 կադաստրային ծածկագրով/ և 0.07535 հեկտար վարելահող /09-003-0320-0037, 09-003-0320-0034, 09-003-0320-0033, 09-003-0321-0014 կադաստրային ծածկագրերով/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<էներգետիկայի օբյեկտների

հողեր>> գործառնական նշանակությամբ՝ Հրազդան ՋԷԿ-Շինուհայր ենթակայան 220կՎ օդային գծի հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան՝ մինչև փոփոխումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՐՋԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ
8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «_4_»
ք.Գորիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

**ՈՐՈՇՈՒՄ N 45-Ա**

**«ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԵՄ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Համաձայնություն տալ Եվրոպական միության «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակներում ներկայացված նախաձեռնությանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի անդամագրվելուն:

2.Լիազորել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցին հանդես գալու համայնքի անունից և մասնակցելու ԵՄ կողմից հայտարարված դրամաշնորհի մրցույթին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ
2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ
3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

8. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «4»
ք.Գորիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/06/2017

## ՈՐՈՇՈՒՄ N 46-Ա

## 2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ընդունել ի գիտություն 2017 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները.

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ N1 արձանագրությամբ նշված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ և վերջնական արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

| Կողմ -8 | Դեմ -1 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| 1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ | 1. ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | |
| 2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | |
| 3. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ | | |

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

7. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

8. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ**

2017թ. հուլիսի «__4__»
ք.Գորիս